


ԴՐՈՇՆԻԿ



„ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ “ ՕՐԳԱՆ

Վ. Ե. Բ. Ի. Ե. Գ. Ե. Պ. Բ. Ի. Ա. Բ. Թ. Ի. Ի.

Մ ա յ ի ս, 1894 թ.

Մարտ ամսի 13-ին Յակովբ անունով մի երիտասարդ փորձեց սպանել Աշղեան պատրիարքին. փորձն անյաջող էր:

Սա առաջին դեպքը չէ. հայ ժողովուրդը շատ անգամ և տարբեր ձևերով է յայտնել Սրբազանին իր բողոքը, բայց միշտ անյաջող է մնացել նրա արդար ձայնը:

Ազգաբնակչության խուլ, ճնշված բողոքի հետ միաժամանակ տեղի է ունեցել և ծայրայեղ, տեռորիստական փորձ. — ընթերցողներն անշուշտ յիշում են Յուլիս 15 յայտնի ցոյցը: Աշղեանը չխրատվեց. համարելով այդ ցոյցն իբրև արդիւնք օտար խառնակիչ տարրերի, յոյսը դնելով Նազըմ-բէյի աշխուրջ ոստիկանների վերայ, նա աւելի մեծ եռանդով շարունակեց իր զզուելի արարքները: Բայց ահա դուրս եկաւ ժողովրդի խաւերից նրա զաւակներինց մէկը — Յակովբը, որն արտայայտիչ հանդիսացաւ ժողովրդի եռացող բողոքներին:

Ի՞նչ է այս փաստը: Ո՞վքեր են այդ Աշղեանը և իր նմանները, ի՞նչ բանի են դրանք ձգտում, յանուն որ ըսկըզուենքի են դրանք ոտնատակ տալիս ժողովրդի ամենասուրբ, անձեռնմխելի իրաւունքները:

Տաճկական բռնակալ կառավարութիւնը ժողովրդի թշնամին է. այստեղ ոչ մի կասկած չկայ. ամեն մի բռնակալութիւն թշնամի է աշխատաւոր ժողովրդին և պէտք է լինի: Նա պէտք է աշխատի քայքայված պահել նրա նիւթականը, մութ խաւար թագաւորեցնել նրա մտաւոր աշխարհում. փշացածութիւն, լկտիւթութիւն, լրտեսութիւն, գողութիւն և այլ հազար ու մի ախտեր սերմանել նրա բարոյական կեանքում, որ ինքը կարողանայ հաստատ ու անսասան մնալ որ ինքը կարողանայ հող ունենալ իր ոտքերի տակ: Ժողովրդական կեանքի այդ երեք կողմերից որն էլ զարգանայ՝ վնաս, սպանիչ, մահացու վնաս է բռնակալութեան: Պէտք է ք ժողովուրդը պահել հնազանդութեան մէջ, գրում է իր յիշատակարանում՝ Քիշելեօն, աղքատացրէք նրան և միշտ աղքատ պահեցէք:

Ինչո՞ւ ժողովրդի նիւթական բարօրութիւնը դէմ է բռնակալութեան: — Պարզ է. որովհետեւ միշտ նիւթական հարստութեան հետեւում է ուշ թէ շուտ մտաւոր և բարոյական հարստութիւն: Եւ ուր կայ մտաւոր ու բարոյական զարգացում՝ այնտեղ չի կարող երկար դիմանալ որ և է բռնակալութիւն. զարգացած մարդը չի թողնի որ իրեն կեղեքեն տասանորդով, գլխահարկով, ուղղակի և անուղղակի բազմաթիւ հարկերով, զինւորական տուրքով, յղիշքիբէսի՝ ուլ և այլն:

Մտաւոր և նիւթական հարստութիւնը ժողովրդի կեանքում անքակտելի կերպով կապված են իրար. մէկը կայ՝ կայ և միւսը: Եւ եթէ բռնակալութիւնը կատաղի թշնամի է հանդիսանում այդ ֆակտորներին, դա պարզ է ամենքի համար: Բայց ինչո՞ւ են դէմ ժողովրդին Աշղեանները, Սիմօն բէյերը, Պօղոս եպիսկոպոսները, Աւնի և Իրզրումի փողատեր վաշխառուները ու գուեստ գուեստ լրտեսները: Ի՞նչ են ուզում դրանք ժողովրդից: Ինչո՞ւ մէկը յանուն յազգային Առաքելական Ս. եկեղեցու, միւսը յանուն յազգային և ժողովրդական սիրոյ և բարօրութեան, երրորդը յանուն յետհեմութեան և այլն՝ հնազանդութիւն են քարոզում տանջված ու տանջվող ուժասպառ ժողովրդին: Ի՞նչ է դրո՞ւմ դրանց դէպի այդ ստոր վարմունքը: Ի՞նչն է ստիպում Աշղեան պատրիարքին գրել ամենաստոր ու զզուելի բովանդակութեամբ շրջաբերականներ, այս, այն յառաքելական հայագաւան եկեղեցում խօսել շնամայել քարոզներ. վերջապէս ի՞նչն է ստիպում այս կամ այն գաւառի վաշխառու աղաներին յշնորհակալութեան թղթեր՝ կազմել և ուղարկել մատնել տերութեան իր համաքաղաքացիներին, իր ծանօթներին, մինչև իսկ արիւնակից բարեկամներին. ամբողջ աշխարհի առաջ աւազակ, խառնակիչ և մարդասպան հրատարակել ամեն մի յեղափոխական գործչի:

Ինչո՞ւ: — Որովհետեւ նրանց ներք խմբական շահն է այդ պահանջում: Ինչո՞ւ են գողն ու գայլը մութ գիշերներ որոնում, ինչո՞ւ են ջրի պղտոր ժամանակ ձուկ որսալու դուրս գալիս: — Արհեստի շահն է այդ պահանջում: Բռնակալ է կառավարութիւնը, տգէտ է ժողովուրդը:

խեղձ, աղքատ է՛նա, աւելի շուտով կը հարստանան, աւելի հեշտ կը կարողանան փառք պատուի տիրանալ, շքաշաններ ստանալ ժողովրդի այդ ցեցերը:

Երո՞ւսանդէ՞մի Յարութիւն պատրիարքի մի քարոզը, որի մասին գրել էինք մեր անցեալ համարներից մէկում, քարոզին արժանացրեց մեծ եպարքոսի տեսութեանը և Սուլթանի ամենաողորմածաբար շարտած ոսկիներին: Աշղղեան պատրիարքը և Սիմէօն բէյը ազգային ժողովը փակեցին. նրանք ևս արժանացան դեղին մետաղի մի քանի կտորներին: Մատնում է մի ստորաքարչ հայ այս կամ այն մեղաւոր կամ անմեղ մարդուն, — նա ևս ստանում է փող . . . Միշտ փող: Եւ այդ փողը նման է այն ոսկիներին, որ տէրը ողորմածաբար ածում է շան առաջ, իսկ շունը հաւատարմաբար պաշտպանում է նրա կայքը:

Աշղղեանի նման մի հոգևորական քար գցեց Կրօնական ժողովի վերայ, փակեց նրան, որովհետև այստեղ կար մի ուրիշ բռնապետական ձգտում: այսուհետև նա մենակ կամ իր գողակից ընկերներով կը կառավարէ ժողովրդին, մենակ կը կողոպտէ:

Դարձրէ՞ք աչքերդ գէպի վան, Էրզրում, Մուշ, Երզնկա . . . Ո՛վքեր են այդ բազմաթիւ լրտեսները: Համարեա բոլորն էլ մեծ և փոքր վաշխառուները, ժողովրդի այդ տղրուկները: Նրանք մատնում են, նրանք սուտ վկայութիւններ են սալիս, նրանք զրպարտում, մեղադրում են այս և այն ողորմելի գիւղացուն, խեղձ արձեւտաւորին իբրև յեղափոխականներ, որ դուր գան վալիին, որ այս կամ այն կապալը էփան ձեռք ձգեն, որ իրենց հնարովի հրէշաւոր մուրհակները սաղացնեն: Առանց փաշայի կամ զադիի քաղցր աչքն իր վերայ դարձնելու, նրանք չեն կարող անել այն զարհուրելի քանակութեամբ կատարվող ոճիրները, որ տեղի են ունենում այսօր: Բռնակալութիւնը մութ, խաւար գիշեր է, որի մէջ վաշխառուն և լրտեսը, էֆէնդին ու բէյը պատրիարքն ու եպիսկոպոսը հանգիստ ու վստահ կարող են գողանալ, կողոպտել, ծծել ժողովրդի արիւնը, որքան ուզում են:

Օ՛, նրանք շատ լաւ են զգում, որ ամեն մի յեղափոխական իրենց մահացու թշնամին է: Նրանք լաւ են զգում, որ այդ մտեցող յեղափոխութիւնն իրենց համար լաւ բան չի խոստանում: Եւ դուք ուզում էք, որ այդ հրէշներն օգնե՞ն յեղափոխական գործին:

Ո՛չ, դրանք չեն կարող օգնել: դրանք յեղափոխութեան կատարի թշնամիներն են և աւելի վտանգաւոր, քան տաճիկ բաշիբուզուկ վարչութիւնը, որովհետև դրանք շատ անգամ զինված են լինում ազգութեան, եկեղեցու, կրօնքի սրբութեան, խոհեմութեան և այլ գէներով, որովհետև դրանք գիտեն յաճախ խաբել տը-

գէտ ժողովրդին: Սով է վանում, Էրզրումում, սով է ամեն կողմ: Բազմաթիւ մանր ու խոշոր վաշխառուների ժամանակը հասել է, նրանք էլ իրենց ատամները սրել և որսի են սպասում: Այժմ արդէն տաճիկ վարչութիւնը երախտագիտաբար պիտի վարձատրի այդ վաշխառու լրտեսներին և բռնակալութեան փթած հիմքը պաշտպանող տղրուկներին: Եւ ահա տրվում է նրանց ազատ ասպարէզ ամբարները լցնել հազարաւոր փութ ցորենով և չլսված գներով ծախել:

Բացվում է մի տեղ մի իւղալի պաշտօն. իսկոյն նրստեցնում են մի մատնիչ լրտեսի, որ ի տրիտուր իր արած բոլոր ծառայութիւնների, ծծի ուժասպառ ժողովրդի արիւնը:

Ամեն կողմ տղրուկներ, մատնիչներ, լրտեսներ, Աշղղեաններ, բէյեր ու էֆէնդիներ, ծծեցէ՛ք, ծծեցէ՛ք ժողովրդի արիւնը, որովհետև մտանում է ձեր վերջը, հասնում է ձեր օրհասը: Յեղափոխութեան սուր սուսերը ձեր գլխին է և արդէն փայլում է: Վայ՛ ձեզ . . .

Բայց ի՞նչ վայ, դրանք գիտեն հանգամանքներին յարմարվել: Տեսաք, տաճիկ բռնակալութեան կործանման հետեւալ օրն և եթ նրանք կը հանդիսանան ջատագով պաշտպան կատարված իրողութեան և այստեղ ևս կաշխատեն որոնել իրենց անհատական օգուտը:

Ընթերցող, կարդացե՛ք ես «Լուսադէմին» վէպը, յիշիր Հաջի Խրիստոյին: Նա մատնում էր յեղափոխական գործիչներին, իսկ երբ յաղթութիւնն անցաւ վերջիններիս կողմը, ոգևորված ընկել էր յաղթական զօրքերի առաջն իբրև յեղափոխական, իբրև գործիչ . . .

Հայ յեղափոխականը չպիտի խաբվէ դրանցից, նա չպէտք է կանգ առնի. թշնամի են դրանք մեզ այսօր, աւելի վտանգաւոր թշնամի կը լինեն տաճիկ բռնակալութեան անկումից յետոյ: Այդ մարդկանց համար սրբութիւն չկայ: Նրանց միակ սրբութիւնն իրենց գրպանն է և իրենց հանգիստ կեանքը:

Դրանցից էին այն հայ մատնիչները, որոնք ընկան վանում տեղական մասնախմբի գաղղնի հարուածից, դրանցից է գնտակահար եղած ունս Կրպօն, դրանցից են Քարգիբաշեանը, որ հագիւ առողջացաւ իր ստացած վէրքից, Տէր Պողոսեանը, որ ազատվեց յեղափոխական գնտակից, դրանցից է Աշղղեանը, որի վերայ Դորոճեց երիտասարդ Յակոբն իր ատրճանակի հարուածները: Ո՛չինչ, այդ չյաջողվեց, մի ուրիշը կը յաջողվի:

Առաջ գնա՛, յեղափոխական գործիչ — այդ է ուղիղ ճանապարհը. ո՛վ ժողովրդի թշնամին է, նա պէտք է ընկնի. ի՞նչ քօղով էլ ծածկված լինի նա՛ մեզ համար միևնոյն է. եկեղեցապան է նա, թէ աշխարհական, էֆէնտի է, թէ բէյ կամ փաշա, — փոյթ չէ՛ նա պիտի մեռնի:

Յակոբը ժողովրդի զաւակն էր, նա ինքնուրոյն, անկախ յեղափոխական էր, նա ժողովրդի անկաշառ, ինքնածին գիտակցութեան արտայայտիչն էր և նրա առաջին փորձը Ալըղեանի, ժողովրդի ցեցերից այդ ամենամեծի վերայ եղաւ:

Դա է միակ ուղիղ ճանապարհը, դա է տանում մեզ դէպի նպատակ:

Ա Ղ Բ Ա Վ Ի Վ Ի Ճ Ա Վ Ը
(Նամակ Ղանից)

Աղբակը համեմատաբար շատ տխուր վիճակ, թշուառ դրութիւն է ներկայացնում: Նրա մէջ հայ ժողովուրդը բնակիչների հազիւ երրորդ մասն է կազմում: Յաւակն այն է, որ Աղբակը, կազմելով սահման թուրքաց և պարսից տէրութիւնների, ոտի տակ տրորվում է այն բազմաթիւ քիւրդ հրոսակների, որոնք կողպատելով սպանելով միշտ անցնում են մի կողմից միւսը: Աւելացրէք և այն, որ ժողովուրդը միւս գաւառների հետ համեմատած՝ աւելի թոյլ է:

Սակայն ես չեմ ուզում թախիծ բերել յեղափոխական սրտերին: Երբեմն դառն արտասուքի տակից երևում է յոյս տուող ժպիտ:

Ղալի փաշաների ծրագիր-հրահանգները Աղբակում գործադրող յայտնի է տասնեակ տարիներից ի վեր Շէյխ-Համիդը, Աղբակի դաժան օձը: Ինչպէս և ամեն տեղ, նոյնպէս և հոս, թիւրք կառավարիչն իր դերը կատարում է ճշտութեամբ՝ իբրև դրդող, թելադրող, իբրև աւազակների խումբ բանեցնող և, որ գրկաւորն է, աւար-թալանի մեծ պատառը ճանկող:

1893 թ. ամառն Աղբակի բաղդը շուռ եկաւ: Շէյխ Համիդը կովեց իր փեսայ Շարաֆ բէկ քիւրդի հետ, նրանց յարաբերութիւնները վաղուց լարված էին: Բանը նրանումն է, որ Շարաֆ բէկը յերիտտեանների կողպուտից բաժին չէր ձգում Համիդի որկորը, այլ կշտացնելով միայն Սուլթանի հաւատարիմ ներկայացուցիչ թուրք կառավարչին, մտնում է այդպիսով տէրութեան հովանաւորութեան տակ:

Սակայն անցեալներում մի դէպք առիթ տուեց խղելու Համիդի և Շարաֆի յարաբերութիւնները. աւելորդ չի լինի մանրամասն յիշել այդ դէպքը:

Առհասարակ թուրք կառավարութեան և քիւրդերի կազմակերպած աւազակային խմբերն աւելի կռանդուն կերպով գործում են աշնանային ամիսները: Շարաֆ բէկն իր խումբն ուղարկում է Աղբակից դէպ այլեմուտք, Խօշաբ և Մահմուդիէ գաւառները (վերջինս Ղանից 8 ժամ է): Աւազակները բաւական թափառելուց յետոյ յարձակվում են Բուէլ անունով հայ գիւղի վերայ երեկոյեան: Մի մասը շրջապատում է ոչխարի փարախը, իսկ միւս մասը անմիջապէս սկսում է կրակ տեղալ փարախի շուրջ գտնվող տներին, որպէս զի գիւղացին հաւարի չգայ: Սարսափն ու շփոթութիւն տիրում է գիւղին: Գիւղի մէջ այդ օրը 9 զաֆտիա է լինում: Օսմանեան քաջ զինւորները գլուխները կորցնում են և փամփուռաւոր հրացանները գրկած՝ դողդողում: Հայ երի-

տասարդները իրար են անցնում, պատէ պատ դիպչում, խնդրում, պաղատում, հայհոյում. քաջ զինւորներին, որ եթէ իրանք հաւարի չեն դուրս գալիս, գոնէ երկու երեք հրացան տան իրանց: Մինչ այս, մինչ այն՝ աւազակներն սկսում են գիւղի հօտը դուրս քաշել փարախից: Երիտասարդներից մէկի՝ Յակովբ Յարութիւնեանի սիրտը չի համբերում. անգէն բրեն ձգում է բարբարոսների մէջ և դնտակների սոււրցի տակ հասնում մինչև փարախը ու գոռում. «Բարբարոս շնք, կարծում էք, թէ մենք մեռած ենք»: Հազիւ այս պաշտելի կտրիճը փարախի դուռը բռնում է ոչխարն արգելելու համար, բայց այդ րոպէին քիւրդի գնտակը քաջ Յակովբին դըրում է գետին: Երիտասարդները քարով, փայտով զինված հետևում են իրենց նահատակ ընկերոջն և յետ խլում հօտը: Քիւրդերին հազիւ յաջողվում է 80 ոչխար փախցնել: Շարաֆ աղայի ասպատակը միւս գիշերը ազատ համարձակ յարձակվում է Կասր գիւղի վերայ և հայերից բռնում 280 ոչխար, ապա անցնում են Ձէյնիս և այլ գիւղեր ու աւազակային մի փոքրիկ պոռոյտ գործելով 1900-ի չափ ոչխար են դնում իրենց աւազակապետի տրամադրութեան տակ:

Շէյխ Համիդը նախանձից մեռնում է և վերջին անգամ փորձում է իր իրաւունքները յարգել տալ Շարաֆին: Վերջինս յաջողութիւնից կուրացած՝ մերժում է և մինչև իսկ խզում է ամեն յարաբերութիւն:

Համիդը վաղուց փնտրում էր մի դէպք, որ Շարաֆ բէկին մնասի և իր իրաւունքները վերականգնէ: Եւ յաջողեցաւ: Պարսից սահմանագլխի վերայ, Սոմա կոչված սարահարթ գաւառում բնակվում էր Ալիջապի որդի Մամէն, որը պատկանում է Շիկակ կոչված ցեղին: Այս ցեղն ամենաբարբարոսն և ամենաքաջն է ճանաչվում ամբողջ քիւրդ ժողովրդի մէջ: Մամէն մի պատուհաս էր պարսից կառավարութեան համար. նրատած սահմանագլխում՝ նա անդադար աւերում, կոտորում էր: 1893 թ. պարսիկը ըիսկ արեց, մեծ քանակութեամբ զօրք թափեց Սոմա և վառեց Մամէի գիւղերը:

Շէյխ Համիդի բաղդը բանեց: Նա վաղուց բանակցում էր Մամէի հետ, այժմ առիթն ոգնեց: Նա պատգամաւոր պատգամաւորի յետևից կոխեցնում է, խոստանալով, երգվելով, որ նրան մեծ ասպարէզ կը տայ ասպատակութեան համար: Միւս կողմից Համիդը դիմում է Վանայ վալի Բահրի փաշային, ներկայացնելով Շիկակներին իբրև մի հերոսական ցեղ, որը կարող է պատուաբեր լինել Համիդիէի գնտին և շատ օգտակար օսմանեան պետութեան: Բահրի փաշան արդէն վաղուց իր նման վայրենի աւազակներ է փնտրում: Կարճ բանակցութիւնից յետոյ Շիկակ Մամէն իր թիկնապահներով ներկայանում է վալիին: Բահրին սիրեց, հիւրասիրեց նրան, խալաթ տուեց և Շէյխ Համիդի խնդրքի համեմատ հրամայեց Շիկակ էլը բաժանել... հայ գիւղերի վերայ:

Այս բոլորը դիտում էր Շարաֆ բէկը, բայց բըրդական քէնն երբէք նրան չէր թոյլ տալիս հաշտութեան դիմելու իր աներոջ հետ, չէ որ Համիդը Սուլթանի հաւատարիմ պաշտօնեայի և բանտի օգնութեամբ

յափշտակեց Բաշկալայից, Հասփստանից, Էրնկեանից, Առակ և այլ գիւղերից հայերի հողերը, որի ժամանակ եղերական մահով այնքան հայեր մեռան բանտում և դաշտում ու այդքան հողերից ոչ մի կտոր Համիդը չը տուեց իր փեսային, այլ բոլորն անցաւ իր ու գայմագամի որկորը:

Մինչև նոյեմբերի սկիզբը մօտ 200 տուն փոխադրվեցան օսմանեան հողը, Աղբակ և տեղաւորվեցան հետեւեալ հայ գիւղերի մէջ. 1) Առակ, ուր հաստատվեց ինքը Մամէն, 2) Բազ, 3) Մալկալա, 4) Էրեսան, 5) Հասփստան, 6) Սորան, 8) Խառատուն, 8) Չուխ, 9) Էրնկեան և 10) Աշկերտ: Հայ գիւղացու ամբողջ ձմեռուայ պաշարը շիկակներու ձեռքի տակն է: Ինքնակոչ բարբարոս հիւրերը ինչ ասես չեն հանում գիւղացու դիակն, իսկ նա ձեռքերը ծալած, դրան ետեւը կանգնած, իբրև մի անշունչ դիակ, տեսնում է, ինչպէս իր տան վերի գլուխն աղա շիկակը նստած լսւում է իր սեփական քրտինքը, Բահրիի, որդմած կայսեր Սուլթան Համիդի հրամանով:

Այս պսակէս լինելուց յետոյ, Աղբակի գիւղացին փոխանակ անձնուէրներին հետեւելու, օրինակ է վերցնում այն զգուելի ու վախկոտ հայերից, որոնք սարսափի տակ ամեն բան թողած, մերկ ու տկոր, փախչում, գաղթում են Պարսկաստան, ուր զրկված ամեն բանից, սրա, նրա դուռը մշակութիւն անում, փողոցներն ընկած հաց մուրում և կարծ ժամանակում մաշվում, փչանում:

«Ամենայն տեղ մահը մի է», աղբակցիներ, բայց հազար երանի նրան, ով իր գիակը թողնում է իր սիրելի հայրենիքում:

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց

Մեր, երզրումցիներին, դուռթիւնը օրից օր վատանում է. տեղացի և շրջակայքի գազանաբարոյ թիւրքերի և մեր անսիրտ ու անտարբեր Սուլթանի անուշով կնքված արկնարբու հեծելազօրքից կրած անհամար նեղութիւնները բաւական չէին. այժմ վրայ հասաւ սովը, լրացնելով այդ մարդանման վագրների թողուցած պակասը: Բառի բուն նշանակութեամբ մեր վերայ ոյժ չէ մնացել. է՛հ, մեռած ենք, թաղող չունենք: Մի ժամանակ մեր, Բասէնի և Օվայի (գաշտ) հացը առատութիւնից ամբարներումն էր փթում, այժմ թէ Օվայից և թէ Բասէնցին ոչ մի հատիկ ցորեն ունեն, ոչ էլ մի հատ կոպէկ: Թուեմ պատճառները, թէ ինչու առաջ ամբարներում փթում էր և այժմ ինչու ուտելու բան չկայ, կարծում եմ պէտք չէ, ո՛ւմը յայտնի չէ:

Քաղաքի հացթուխները ցերեկն անգամ փակ են պահում իրենց փուռի դուռը և խափանքները, որովհետև քաղցածների բազմութիւնը կարող է ամեն ընդհանրապէս ներս խուժել ու թալանել հացը: Խափանքի վերայ մի փոքր ծակ կայ բացված, այնպէս որ հազիւ կարելի է մի հատ հաց դուրս տալ: Դէպի այդ ծակը հարիւրաւոր ձեռներ կան պարզված փողով, «հաց տուր, հաց տուր», լսվում են անդադար, բայց հազիւ մի քանի ընդհանրապէս հացն արդէն վերջացել է, խափանքի ծակը փակվում է, և խեղճ ժողովուրդը յուսահատ, վիզը ծուռ, մնում է այնտեղ աչքերը ջրակալած ու յառած

դէպի խափանքի ծակը: Ամեն օր, երեկոյեան ժամի մէկից մինչև երկուսը (ըստ թիւրքաց) 2 տարեկանից մինչև 4 տարեկան երեխայք մերկ, ոտաբոբիկ, ցրտից դողդողալով և ձեռքերը բերանները կոխելով, խփում են դռները և աղիողորմ ձայնով ասում. «որդրմութիւն արէ՛ք, մի պատառ հաց տուէ՛ք, արեւներիդ ղուրբան...» Եւ այսպէս հազար աղաչանք, որոնց ասողի լեզուն անգամ յաճախ չի հասկացվում, որովհետև տեսնում ես այդ փոքրիկների լեզուն դեռ չէ բացված, զարմանում ես, թէ այս փոքր երեխան ինչպէս կարողացաւ դուռը խփել կամ դրան զանգը հնչեցնել. և այդ բոպէին քիչ հեռու, աւելի մթնումը, նկատում ես մի ստուեր կնոջ կամ տղամարդու, որը իր ամօթից ինքը չի համարձակվում մօտենալ ձեռք պարզել, որովհետև մի տարի առաջ ինքն էր որդրմութիւն բաշխում. աղքատներին, խանութ ունէր, գործ ունէր, բայց այսօր նա զրկված է այդ բոլորից և կարօտ մի պատառ հացի: Այդ փուռչները ալիւր գնում են թուրք աղաներից ու բէկերից, որոնք վաղօրօք հաւաքել են ցորեն և ալիւր ու այժմ եռապատիկ գնով ծախում են: Փուռչներն այդ ալիւրին խանում են, ինչ որ հնարաւոր է խառնել, օրինակ, աւազ, կիր, փայտի թեփ և այլն: Մարդ սոսկում է այդ հացի երեսը տեսնելիս, ցեխն աւելի լաւ է: Մինչև այժմ մօտ 20 ընտանիք միայն քաղաքից գաղթել են, դրանց մի մասը հաց գնելու, իսկ միւս մասը թուրքի և քիւրդի զուլումից ազատվելու համար:

Ալիւրը ծախվում է լիւրը (20 ֆունտից մի քիչ պակաս) 15-17 դրամի (1ր. 50կ.-1ր. 65կ.): Այդ գինն ինքըն ըստ ինքեան բարձր գին չէ. երզրումցիք 1880-1881թ. 25 դրամով էլ ալիւր գնեցին, բայց այն ժամանակ թէ քաղաքացիք քիչ թէ շատ փող ունէին և թէ ալիւր կձարվէր, մանաւանդ որ քաղաքի և գիւղերի թուրք հասարակութիւնն այն աստիճան գազանացած չէր: Այժմ գրեթէ փող չկայ և քաղաքի դռներում պահապաններ են դրված, որ քաղաքի մէջ մտած ալիւրը, ինի դա սեփական տան համար կամ ծախու, մի և նոյն է՝ բոլորն ուղարկում են բազար, ուր մի պարկ ալիւրի վրայ թափվում են 10-15 թուրք և մէկը միւսի ձեռքից խլում, իսկ հայն իրաւունք չունի բազարում ալիւր գնելու, քանի «խլում էլ իրիկը» չի գնել իր ուզածի չափ: Այսպիսով ոչ մի հայ չի կարող բազարից մի բուռն ալիւր ազատ տանել իր տունը, կերակրելու իր ընտանիքը, իր քաղցած զաւակներին: Աերջպէս հայերն ստիպված այսպիսի մի միջոցի դիմեցին. իրենց ծանօթ մի թուրքի կանխիկ վճարում են մի պարկ ալիւրի համար 20-30 դրամ, որ իրանց փոխարէն մի պարկ ալիւր գնէ, բայց այդ միջոցի հետեւանքն էլ աւելի վատ դուրս եկաւ, որովհետև գտնվեցան այդ ծանօթների մէջ այնպիսիները, որոնք թէ կանխավճարը և թէ ալիւրը միասին կերան, ալիւրի փոխարէն յանձնարարողին հայհոյեանք և ծեծ տալով:

Սրանից 3 շաբաթ առաջ թիւրքաց կանոնաւոր զինուորներից երեք հոգի մտնում են վերմակներ, շինող մի հայի խանութ, որպէս վերմակ գնող. սխտւում են սակարկել և կամենում են երկու հատ վերմակ իսկական

արժեքի քառորդ գնովը տանել. հայը չի տալիս: Զին-
ւորներն ուզում են զօռով տանել և տեսնելով հայի
ընդդիմադրութիւնը՝ յարձակվում են նրա վերայ և
իր խնուրթի մէջ անգթաբար ծեծելուց յետոյ էլ ապ-
րանքների մի մասը յափշտակում ու դնում են: Չնա-
յեղով որ բաւական մարդիկ էին հաւաքված խնուրթի
առաջ, թէ պաշտօնական անձինք և թէ հասարակ
քաղաքացիներ, բայց ոչ ոք չի համարձակվում մտնե-
նալ և խեղճին ծեծողների ձեռքից ազատել: Ծեծ-
վողի մայրն ու կինը դիմում են ուսաց. հիւպատոսին,
որն իմացնում է այդ անցքը նահանգապետ փաշային
(կարծես հիւպատոսն է պարտաւոր նահանգապետ փա-
շային իր նահանգական քաղաքի մէջ անցկացածների
մասին տեղեկութիւն տալ): Փաշան «գասուն-չառչնե-
րուն» հրամայում է գտնել այդ ստահակներին և պատ-
ժել, բայց «գասուն-չառչներն» այդ զինւորներին տես-
նելիս՝ իրանք էին փախչում, ասես թէ զինւորները
լինէին իրենց բռնող ու պատժողը:

Զինւորի մէկը մի հայ սառափի դուքանից փող էր
ուզում: գողանալ սառափը նկատեց և անպատվեց, ա-
սելով թէ զինւորը, փոխանակ հասարակութեան շա-
հերը պաշտպանելու, փոխանակ հասարակութեան կար-
գերի պաշտպանութեան նախանձախնդիր լինելու, ինքն
է գողութիւն անում: Այս խօսքերի համար խեղճ սա-
ռափը լաւ ծեծ կերաւ. ի՞նչպէս կարելի է Սուլթանի
զինւորին գող անուանել, նա չէ ուզեցել գողանալ, այլ
կատակ է արել:

Բասենի Հերթա գիւղից մի գիւղացի հայ իր աղջկան
փախցրել է քաղաք իր աղբականի մօտ պահում, որով-
հետեւ այդ գիւղի թուրք բէկը, արդէն մի քանի կոյ-
սեր առևանգելուց յետոյ, բացարձակ յայտարարել է,
թէ հերթն այդ աղջկան է հասել: Հերթացիք վաղուց
այդ բէկի բամբակը կը գզէին, բայց մի սպանվածի փո-
խարէն ամբողջ գիւղը կրակ կը տան և մարդկանց բան-
տարի մէջ կը փթացնեն, ինչպէս ցոյց են տալիս օրի-
նակները:

Մի քանի քրդեր Շահինեան Արապետին իր որդ-
կերանց հետ խնուրթի մէջ ծեծում են և ապրանքը
թալանում: Թիւրքաց արդար դատաստանը Շահինեան-
ներին վճռեց 3 ոսկի տուգանք, իսկ քրդերից միայն
մէկին՝ 3 օր բանտարկեց և սյսպիսով արդարութիւնը
վերականգնեցրեց:

Ահա մեր դրութիւնը էրզրումի մէջ, ուր կան ուս-
աց, ֆրանսիացոց, անգլիացոց հիւպատոսներ, ամերիկա-
կան միսսիօներներ, որոնց մասին թուրքերն իրանք շատ
լաւ գիտեն, որ ամեն դէպք մանրամասն գրում են և
նկատողութեան առնում: Մենք որ այս պայմանների
մէջ այսպէս ենք, ի՞նչ կը լինի վանեցոց, մշեցոց, բիթ-
լիսցոց և միւսների դրութիւնը, որոնց հետ թուրք կա-
ռավարութիւնը կարող է վարվել անվախ և առանց
նկատողութեան ենթարկվելու:

Մշոյ դաշտում Խէյպան գիւղի Տ. Աւետիսեան Ա-
ռաքել և Մանուկ եղբայրը անցեալ նոյեմբերին բռ-
նուեցան Մշոյ դատարանում: Մութէսէրիֆը կը պա-
հանջէ նոյն եղբայրներից 300 օսա. լիրայ. կը նշանա-

կէ՝ ազատադրամ կանեն: Չգիտցվի արդեօք, ինչ էր,
որ այդպէս խիստ պատժվեցան.— յիշեալ Տ. Աւետի-
քեանք տաս տարի առաջ իբր քրդեր սպանած են, և
մէկի կինը չորս տարի առաջ մնացած է Կարս:

Ն Ա Մ Ա Կ Գ Օ Լ Ս Ի Ց

«Դրօշակի» ընթերցողներն իմացան, որ մարտի 13-
ին կիւրակի օրը, պատարագէն ետքը դաւաճան Աշըղեա-
նի անձի վրայ սպանութեան փորձ եղաւ, բայց անյաջող:
Այս փորձը սարսափահար ըրաւ Սուլթան-Համիտ և
սիրտը դող ելաւ, վախնալով որ յանդուգն յեղափոխա-
կանի գնտակը և նրա դաշոյնը վաղը կրնայ իւր և իւր
պաշտօնեաներու սիրտը մխլել, իւր սիրելիներու արիւնը
հոսցնել, իւր վրէժը լուծել՝ արեան դէմ արիւն հոս-
ցնելով: Եւ թիւրք բռնապետութիւնը, քանիցս նկատած
ենք, այդ ցանկալի վարկեանը օր աւուր կարագացնէ իր
բռնութիւններով, հալածանքներով, բանտերով ու կա-
խաղաններով այդ ցանկալի ժամը, որի համար յեղա-
փոխականը կաշխատի գիշեր ցորեկ և կըսպասէ սրտա-
տրոփ:

Թիւրք բռնապետութիւնը, հետեւելով իր խղճտառակ
քաղաքականութեանը, կուզէ հաւատացնել, թէ հայ ժո-
ղովուրդն ապահով ու երջանիկ կապրի, իսկ այն քանի
մը խռովարարները հացկատակ, բախտախնդիր, սինլքոր
օտարահպատակներ են, որ կը մոլորեցնեն իր միամիտ ու
հաւատարիմ հպատակները և երբեմն երբեմն յուզումներ
և անկարգութիւններ յառաջ կը բերեն: Թիւրք կառա-
վարութիւնն այս անգամ ալ չչեղովեց իր գծած ճամ-
բէն և վայրկեան մը ուզեց մոլորեցունել Եւրոպայի
հանրային կարծիքը և մամուլը և յաջողեցաւ:

Ոստիկանութեան նախարարն իսկոյն իր լրտեսներու,
ոստիկաններու ու պաշտօնեաներու բերնով ամեն ուրեք
լուր տարածեց, թէ Աշըղեանի վերայ փորձ անողը անգ-
լիահպատակ է և կիպրոսցի: Այս լուրը հաղորդվե-
ցաւ թէ հայ և թէ օտարազգի թերթերուն: Ոստիկա-
նապետի այս սրամիտ (իրենց խելքով) արարքը երկար
չտևեց, շուտով ստուգվեց, որ այդ երիտասարդը ոչ անգ-
լիահպատակ է և ոչ օտարահպատակ, այլ յիր հա-
ւատարիմ, գոհ ու երջանիկ՝ հռչակված հայ հպատակ-
ներէն է: Ապուշ կառավարութիւնը կը կարծէ, թէ եւ-
րոպական մամուլը և հանրային կարծիքը խաբելով ու
մոլորեցնելով պիտի յաջողի իր քայքայված, կազմալուծ-
ված պետութիւնը պահպանել և հայկական խնդիրը
խեղդել: Կառավարութիւնը կամաւ կուրանալով կը յու-
սայ կուրացնել և մեծ պետութիւնները, որոնք իր և իր
ժողովրդի վիճակը աւելի լաւ գիտեն ու իրմէն լաւ կը
տեսնեն, բայց եթէ կը լռեն, այդ ոչ թէ կը հաւատան
իրեն, այլ որովհետեւ իրենց շահն առայժմ կը պահան-
ջէ լուր, անտարբեր ձեւանալ և շահագործել քայքայ-
ված Թիւրքիան և Թիւրքիոյ ժողովուրդն անխտրապէս:
Բայց այդ ալ երկար չի տևիլ շնորհիւ յեղափոխութեան
հսկայաքայլ տարածման ու զարգացման: Բայց դառ-
նանք անգլիահպատակ հրատարակված Յակոբին:

Յակոբը զուտարիւն թիւրքահպատակ է, Աստարիա ծը-
նած և այնտեղի դպրոցէն ելած: Բաւական բարեկիրթ,

խելացի, ընթերցասէր 22-23 տարեկան համակրելի երիտասարդ մ'է: Արհեստաւոր է և կետիկ-Փաշա շաքարագործի մը քով կաշխատէր երկար ատեն: Աւարպետ շատ դո՛ճ էր իրմէն և Յակոբի՝ խորհուրդներէն կը շահվէր միշտ:

Աերջին օրերը Յակոբոսը շատ մտազբաղ կերևար, իր դէմքի վրայ պարզ կը տեսնվէր հոգ մը, ցաւ մը կերևէր, որ ներսը բան մը կը կատարվէր, բայց թէ ինչ ոչ որ չը գիտէր, ոմանք հիւանդ կը կարծէին, իսկ ոմանք սիրահարված:

Փետրվարի 24-ին, Աւարդանանց տօնի օրը, հրատարակվեց անամօթ և դաւաճան Աշղղեանի պատրիարքական շրջաբերականը, ուղղած բոլոր դաւառական առաջնորդներուն, տեղապահներուն, պատրիարքական փոխանորդներուն և վանահայրերուն: Պօլիս մի յուզում առաջ բերաւ տգէտ դասու մէջ, իսկ հասկացող դասու համար մազաչափ նշանակութիւն չունեցաւ, որովհետև շունը պատիւ ունի այսօր, Աշղղեան չունի, շուն մը հաջի թէ Աշղղեան՝ մի և նոյն է: Եւ այս ոչ միայն հայու համար, այլ և օտարի՝ յոյնի, բօլղարի, մինչև իսկ թիւրքի: Հայ ազգը Աշղղեանին չի ճանչնար իբրև պատրիարք և իր ներկայացուցիչ, միայն բռնապետութիւնն է՝ որ այդ գիտնալով հանդերձ՝ Աշղղեանը՝ կը պահէ, կընդունի, որովհետև իր նպատակներուն հասնելու համար կը վախնայ, թէ ատկէ աւելի լաւ գործիք մը չգտնէ:

Տիրահոգակ շրջաբերականէն 15 օր առաջ դաւաճան Աշղղեանը կայսերական պալատ կը կանչվի և իրմէն բացատրութիւն կը պահանջվի դաւառներում պատահած յուզումների համար: Իրեն կըսուի, թէ խռովութիւնները երթալով փոխանակ նուազելու՝ կը շատանան, կը տարածվին և այսօր համարեա ամենուրեք խռովութիւններ, ընդհարումներ տեղի կունենան (և այս ըսողներ միաժամանակ կը յայտարարեն, թէ շնորհիւ Ողորմած Աուլթանի ամեն տեղ խաղաղութիւն կը տիրէ), կերևի թէ հոս, Պօլսէն, հարուստ հայեր կօգնեն, կը քաջալիրեն դաղնապէս. ապա թէ ոչ՝ ի՞նչպէս կընայ աղքատ ժողովուրդ մը այսքան նեղութեանց դիմանալէն զատ, ասպատակաց խմբեր կազմել, ղէնք, ուղղամթերք ձեռք բերել ու խռովութիւններ յարուցանել: Դաւաճան Աշղղեանը փոխանակ պատեհութենէն օգտվելու, ժողովուրդի ցաւերի մասին խօսելու, կսկսէ տերևի պէս դողալ լեզուն խորը կիչնայ և կմկմալով կըսէ. ինչ գիտեմ, ինչ գիտեմ, ես ձեռքէս եկածը կընեմ, ասկէ աւելի ի՞նչ կըրնամ ընել:՝

Այս տեսակցութիւնը ժամ մը կը տևէ. փոխադարձ համաձայնութեամբ կորոշվի նոյվք, անէճք կարգալ հայ եկեղեցիներու մէջ, բայց ետքը կը խորհեն և կը խմբադրեն այս չարագուշակ շրջաբերականը, որի հրատարակութեան օրէն սկսան ձերբակալութիւններն և բանտարկութիւններն, որոնց թիւը մի քանի շաբթու մէջ հարիւրէն կանցնի. դաւառներու մէջ կատարվածները յայտնի չէ: Աշղղեանի «գող ու գողակիցը» մատնիչ Սիմէօն բէյն է, որի դէմ ժողովրդի նոյնչափ դայրացած, յուզված է, որչափ անոր ընկեր Աշղղեանի դէմ:

Ժողովրդի դժգոհութեան ու յուզման արտայայտի-

չը եղաւ: Յակոբը իր փորձով, որն, ինչպէս գիտէք, անյաջող եղաւ: Այս անյաջողութիւնը ծանր տպաւորութիւն թողոց և իւրաքանչիւրի բերնէն կը լսվէր. «Ան շունը չսատկեցաւ, շունը կենդանի մնաց... երբ պիտի ազատվենք ագորմէն և Սիմէօն բէյնէն»: Այդ անյաջողութիւնը մի մեծ սուգ էր:

Յակոբը երեք անգամ ուզած է ատրճանակը պարպել, բայց կրակ չէ առած, որովհետև բեմօլվերի շիջներս է մտած եղեր. երրորդ փորձէն հասկցեր է բանը և երբ ուզեր է շիջը քաշել, 2 հոգի՝ Զանիկ անունով դերձակ մը և հիւանդանոցի պաշտօնեայ Մոստիճեանը յարձակված են վրան, երիտասարդին ձերբակալած և յանձնած ոստիկանութեան: Աշղղեանը կը մարի, կիչնայ, ձերբակալութեան ժամանակ Յակոբը պարզութեամբ կըսէ. «Հոգ չէ, թող ես ձերբակալվիմ, բայց շունը պիտի մեռնէ, որովհետև եթէ ինձ չյաջողվեց, ընկերներուս կը յաջողի»:

Յակոբին 3 օր շարունակ սոսկալի տանջանքներու են թարկած և այն աստիճանի, որ ազատվելու համար իր քանի մը ընկերներու անունները տուէր է: Ինչպէս Յակոբը, այնպէս էլ ընկերները, խոստովանած են, որ իրենք վճռած էին Աշղղեանն սպանել, որովհետև այն օրէն որ Աշղղեան պատրիարք եղաւ, հայ ազգի վիճակ օր աւուր ծանրացաւ ու գէշացաւ, որովհետև իրենց վիճակը նա չէր յայտնէր Սուլթանին ու դարման չէր խնդրէր:

Յակոբի փորձէն մինչև այժմ անհաշիւ ձերբակալութիւններ եղած են: Անգիւացի մը անցեալները շատ իրաւացի նկատեց, թէ այս ինչէր կըլլայ, Պօլսոյ մէջ հայերը կորան պարզապէս:

Հնչակի թղթակցի հաղորդած լուրը՝ թէ Յակոբն իրեն Հնչակեան է յայտարարած՝ ճիշտ չէ. Յակոբ ինքնուրոյն է և գործած է բոլորովին անկախ: *Լ. Ա. Յ.*

Ա Յ Բ Ո Ւ Բ Ե Ն

(Շարունակ.)

Անցեալ համարում մենք ցոյց տուինք, թէ ինչ արմատական հակասութիւնների մէջ է ընկել Հնչակը և ինչպէս է ինքն իրեն ասպտակներ հասցնում:

Շարունակներ, սակայն, մեր ընդհատված քաղաւածքը:

Հայութիւնը բաժանում է երկու իրար թշնամի դասակարգերի՝ բուրժուա և պրօլետարիատ: Սակայն այդ երկու թշնամիներն ունեն և մի ընդհանուր թշնամի, դա միապետական կարգերն են: Հայկական հարցն այսպէս բարդ թիւնելով՝ բարդ է և հայ աշխատաւոր ընդհանրութեան ու դորա հետ միասին հայ սօցիալիստների դերը: Նոքա մի կողմից պէտք է ձգտեն տապալելու միապետական կարգերը բուրժուազիւյի հետ ձեռք ձեռքի տուած. միւս կողմից միջոց պէտք է տան հայ աշխատաւոր տարրին պաշտպանելու իր շահերը բուրժուազիւյի դէմ, որը միապետական կարգերի անկումից յետոյ աւելի մեծ ոյժ է ձեռք բերելու: Բայց ի՞նչպէս այդ կատարել — Հարկաւոր է զէնք տալ ժողովրդի ձեռքը: Այդ զէնքը հետևեալն է. —

(Բացատրել աշխատաւոր ընդհանրութեանն իր պատմական դերը, իր սօցիալական քաղաքական խնդիրներն ու

չահերը, զարգացնել նրա դասակարգային գիտակցութիւնը, լուսարանել ու որոշել նրան իր քաղաքական իւրաքանչիւր պահանջը եւ այդպիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի համապատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ անկիւք յեղափոխութիւնը, եւ պրօպագանդայի ու ագիտացիայի հետ միաժամանակ համախմբել ու կազմակերպել նրա ոյժերը մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ ընդհանուր յեղափոխութեան համար — ահա՛ հայ սօցիալիստի, հայ յեղափոխականի բռնկիւք ընթացքն ու աշխատութիւնները»)

Այդ տեսակ զէնք տալու դէմ մենք ոչինչ չունենք ասելու. սակայն մի հանգամանք անորոշ է մնում այդ կտորի մէջ, պարզ չէ, թէ ու՞մ ձեռքը պէտք է տալ այդ զէնքը: Մեր աշխատաւոր ընդհանրութիւնը, որ ըստ Հնչակի անխուսափելի կերպով պէտք է պրօպագանդայի դառնայ, դեռ եւս չէ դառել, դեռ եւս սաղմային դրութեան մէջ է, ինչպէս խոստովանվում է և ինքը՝ Հնչակը. և մեր աշխատաւոր ընդհանրութիւնը կազմում են այսօր գիւղական արգաբնակութիւնը արհեստաւոր դասի հետ միասին: Այնպէս որ, երբ Հնչակը խօսում է վերոյիշեալ կտորում «դասակարգային գիտակցութեան» մասին, որ պէտք է մտցնէ աշխատաւոր ընդհանրութեան մէջ հայ սօցիալիստը, նա պարզ չէ յայտնում, թէ ինչ դիրք պէտք է բռնի հայ սօցիալիստը, իբրև սօցիալիստ, դէպի ներկայումս գոյութիւն ունեցող աշխատաւոր ընդհանրութեան ամենաէական մասը, դէպի գիւղական դասակարգը: Պարզ չէ թէ այդ սօցիալիստական զէնքը զրա ձեռքն էլ պէտք է տալ, թէ միայն սալմի ձեռքը:

Մեզ թւում է, որ ըստ Հնչակի սօցիալիզմն ոչ մի առնչութիւն չունի և չպէտք է ունենայ գիւղական դասակարգի անմիջական շահերի հետ. հայ սօցիալիստը, իբրև սօցիալիստ, գործ ունի միայն բանւորների հետ, հաւատացած լինելով, որ այսօր-էգուց հայ աշխատաւոր ընդհանրութիւնը դառնալու է վարձկան բանւոր:

Մեր այս կարծիքը կազմելուն տեղիք են տալիս Հնչակի թէ ընդհանուր դատողութիւնները և թէ մեր վերելում բերած կտորի անմիջական շարունակութիւնը, որ տեղ նա պարզ ասում է, որ հայ ժողովրդի իսկահան պաշտպանները կը կատարեն բուն սօցիալիստական գործը բանւորներին կազմակերպելով: Պէտք է խոստովանվենք, որ այս կտորն էլ բաւականաչափ չէ պարզում հարցը, մեր դրած հարցին դրական պատասխան չի տալիս, որովհետև, գուցէ, բացի «բուն» սօցիալիզմից բանւորների համար՝ կայ մի այլ սօցիալիզմ, ոչ այնքան «բուն», գիւղական դասակարգի համար: Պարզ և դրական պատասխան մենք գտնում ենք «Մի շարք հարցեր» յօդուածում (Հնչակ, № 16, Դեկ. 1891 թ.): Այդ յօդուածում որոշ կերպով ասված է, որ սօցիալիստական ձգտումներն ուղղակի արդիւնք են բանւորական շահերի, որ պէտք է արդիւնաբերութեան կենտրոն կազմող վայրերում բանւորների մէջ տարածել և բացատրել սօցիալիստական ձգտումները:

Իսկ «գիւղացի ժողովուրդը»:

Բանից դուրս է գալիս, որ այդ «գիւղացի ժողովուրդը» իր անտեսական տարբեր պայմանների շնորհով ընդունակ չէ իւրացնելու սօցիալիզմի գաղափարները»:

Եւ այս տողեր գրողը նոյն Հնչակն է, որը մի ժամանակ ձգտում էր գիւղական համայնական դրութեան վրայ Հայաստանում հաստատել սօցիալիզմը: Իսկ այժմ՝ նա ոչ միայն թողել է սօցիալիզմը հաստատելու այդ ճանապարհը, այլ մինչև իսկ անհնարին է համարում որ և է կերպով «գիւղացի ժողովրդին» ըմբռնել տալ սօցիալիզմի սկզբունքները:

Հնչակի ընթացողները լա՛ւ գաղափար կը կազմեն նրա քարոզած «գիտական սօցիալիզմի» մասին:

Սակայն տեսնենք, ինչպէս է ցանկանում Հնչակը իրականացնել սօցիալիզմը բանւորների միջոցով: Առաջ բերենք այդ կտորն էլ—

«Հայ սօցիալիստները. . . . կը կատարեն մի բուն սօցիալիստական գործ. հայ բանւորներից, այդպիսով, նրանք պատրաստում են, կազմակերպում են «սպարայի գիմնադրական կուսակցութիւնը», որին ձեռք բերած ուսման արական սահմանադրական պայմանները «կը ծառայեն իբրև գործիք» մղելու համար՝ միապետական կարգերի անկումից անմիջապէս յետոյ՝ իր դասակարգային կոխը շահերով իրան հակառակ իշխող դասակարգերի դէմ եւ ձգտելու այլ և և իր անմիջական նպատակ դարձած սօցիալիստական կազմակերպութեան հաստատութեան»)

Այս ի՞նչ «սպարայի գիմնադրական կուսակցութիւն» է: Հարկաւոր է քիչ կանգ առնել սրա վերայ, մի քիչ պարզել:

Բանւորական հարցն իբրև ինքնուրոյն դասակարգային հարց, հասունացաւ միայն քառասնական թուականներում: Այդ ժամանակ եւրոպական մի քանի երկրներ ազատ էին բոլորովին միապետական ընթացից, մի քանի տեղ էլ այդ ընթացի թէև գոյութիւն ունէր, սակայն թոյլ էր, ներգործական դեր չէր կարող խաղալ: Ուստի այդ երկրներում բանւոր դասակարգին մընում էր ուղղակի կոխ մղել անմիջապէս բուրժուական կառավարութեան դէմ: Իսկ Գերմանիայում, ուր զօրեղ էին դեռ միապետական կարգերը, գերմանական սօցիալիստ-յեղափոխականները ձգտում էին կովել այդ կարգերի դէմ՝ միացած բուրժուազնայի հետ, միևնոյն ժամանակ չմոռանալով, որ իրենք սօցիալիստներ են, որ պիտի շարունակեն իրենց գործը բանւորների մէջ, կազմակերպեն նրանց, ստեղծեն «սպարայի գիմնադրական կուսակցութիւնը», որպէս զի յաղթութիւնը տանելուց յետոյ կարող լինեն իրենց դաշնակից բուրժուազնայի դէմ կանգնեցնել մի զօրութիւն, մի ոյժ և թոյլ չտան նրան ամբողջ արդիւնքը կլանելու և իրենց գլխին նրստելու: Այդ ուղղութեամբ գերմանական սօցիալ-դէմօկրատներն ահագին քայլեր են արել առաջ, գերմանական բանւորները շատ քաղաքական արտօնութիւններ են ձեռք բերել: Այս մենք այսօր տեսնում ենք:

Նոյն ընթացքն առաջարկել են ռուս սօցիալ-դէմօկրատները ռուս յեղափոխականներին, նոյնն առաջարկում են մեզ մեր հայ «սօցիալ-դէմօկրատները»:

Գասեր չառնել պատմութիւնից, միւս ազգերի օրինակից՝ մահացու մեղք է ամեն մի յեղափոխական մարմնի համար, ուստի շատ գովելի է Հնչակի այդ ձգտումը: Բայց խրատ, դաս վերցնել կեանքից և ոչ թէ ընթացիկանել նոյնութեամբ այն, ինչ որ յայտնել են և յայտնում են այս կամ այն երկրի յեղափոխականները:

Երբ գերմանական սօցիալ-դեմոկրատը ձգտում է միաժամանակ թէ միապետական կարգերը ոչնչացնել և թէ «սպագայի դիմադրական կուսակցութիւն» կազմակերպել, կատարելապէս հասկանալի է բոլորի համար նրա անելիքը: Մասամբ հասկանալի է և ուսու սօցիալ-դեմոկրատի ընթացքը, որովհետև թէ միապետական կարգերը, որոնց դէմ նրանք ուզում են կուռել և թէ բանւորները, որոնց պէտք է կազմակերպել, գտնվում են մի և նոյն երկրում: Իսկ ի՞նչպէս են մեր երկրի պայմանները:

Հնչակը միշտ կրկնում է, թէ հայութիւնը բաժանվում է երկու դասակարգի՝ հայ պրօլետարիատի, հայ բուրժուա դասակարգի, որ հայ գիւղացին թողնում է հողը և գնում արդիւնաբերական քաղաքները և դառնում «վարձկան բանւոր» և այլն: Ի՞նչ նշանակութիւն ունեն այստեղ. ամեն մի քայլափոխում կրկնվող հայութիւն, հայ բանւոր, հայ բուրժուա խօսքերը. ի՞նչ արժէք ունեն դրանք սօցիալիստի համար: Եթէ հայ գիւղացին թողնում է հողը, եթէ հայ դարբինը թողնում է իր մուրճը, նա չի մնում իր մայրենի երկրում, նա գաղթում է օտար երկրներ, գնում է Պոլիս, Ռուսաստան, Յունաստան, Ռուսմանիա, Ամերիկա, Աւստրալիա . . . և այնտեղ միայն, Հայաստանից դուրս, նա կարողանում է դառնալ «վարձկան բանւոր»: Վերադարձաւ իր երկիրը՝ նա դադարում է բանւոր լինելուց, նա նոյն հողագործն է, նոյն արհեստաւորը: Եւ եթէ նա կարող է «դիմադրական կուսակցութիւն» կազմել, դա այն երկրներում կարող է անել որտեղ ինքը բանւոր է: Իսկ թէ ինչպէս Ամերիկայի, Յունաստանի, մինչև իսկ Պոլսի բանւորներից Հնչակը պէտք է «սպագայի դիմադրական կուսակցութիւն» ստեղծի Հայաստանի համար, այդ միայն Աստուած գիտէ:

Կրկնում ենք, այստեղ ուշադրութեան պէտք է առնել ոչ թէ հայը, հայութիւնը, հայ բանւորը, հայ բուրժուան, այլ այն երկիրը, որի համար ձգտում կայ քաղաքական ազատութիւն ձեռք բերել. ուշադրութեան պէտք է առնել նոյն երկրի տնտեսական պայմանները, նրա մէջ գոյութիւն ունեցող բուրժուային, բանւորին, լինեն դոքա հայ, թուրք, նասրանի, այդ փոյթ չէ սօցիալիստի համար:

Ահա թէ ի՞նչպէս է հաշտեցրել Հնչակը սօցիալիստական գաղափարն ազգայնութեան գաղափարի հետ, և ի՞նչ խառնաշփոթութիւն է առաջացել դրանից:

Ինչի՞ն վերագրել այս բոլոր անորոշութիւնները, ի՞նչով բացատրել Հնչակի հայեացքների փոփոխութիւնը: Մի՞թէ Հայաստանի տնտեսական պայմաններն այդպէս զգալի կերպով փոխվեցան. գիւղական համայնքներն ըսկեսցին աւելի արագ քայքայվել, թէ կապիտալն ահագին քայլեր արաւ, կամ մի որ և է ուրիշ նշանաւոր փոփոխութիւն պատահեց մեր երկրի հետ, որի ազդեցութեան տակ Հնչակն էլ փոխեց իր հայեացքները: — Ո՛չ այս և ո՛չ այն. «տնտեսական մատերիալիզմը», «մարկսիզմը», — որի ասելով գաղափարների փոփոխութեան պատճառները պէտք է որոնել երկրի տնտեսական պայմանների փոփոխութեան մէջ, — անզօր է գտնվում բա-

ցատրելու, պարզելու այս երեւոյթը: Իսկապէս մի բան փոխվել է, և այդ փոփոխութիւնը կատարվել է ոչ թէ Հայաստանում տիրող արդիւնագործութեան ձեւերի մէջ, այլ . . . արտասահմանեան ուսու յեղափոխական գրականութեան մէջ:

Քանի դեռ այդ գրականութեան մէջ տիրապետում էր «նարօդնայա Վօլիա» կուսակցութեան հայեացքները, Հնչակը կրկնում էր նրա ասածը. նա «համոզված էր», որ կապիտալիզմը կարող է և մուտք չգործել Հայաստանում, որ կարելի է, մինչև իսկ պէտք է արգելել նրա մուտքը, որ գիւղական համայնքները կարող են ծառայել իբրև հիմք սպագայ սօցիալիստական կազմակերպութեան: Բայց հետո՞հետո այդ կուսակցութեան ձայնը թուլացաւ և ասպարէզը (գրական) մնաց սօցիալ-դեմոկրատական կուսակցութեանը: Հնչակն այն ժամանակ «համոզվեց», որ կապիտալիզմն անխուսափելի կերպով պէտք է մեր երկիրը մտնի, որ անկարելի է նրա առաջն առնել, որ գիւղական համայնքները պէտք է քայքայվեն, որ գիւղացին դառնում է վարձկան բանւոր, և այդ բանւորներից պէտք է կազմակերպել «դիմադրական կուսակցութիւնը» և այլն:

Եւ այդ «փոխառութիւնը» կատարվել է այնքան պարզ, բնական, անմեղ կերպով, որ Հնչակի խմբագրութիւնը չի զգացել իր կրած փոփոխութիւնը, կարծել է և կարծում է, թէ ինքը միշտ միևնոյն ուղղութեանն է հետևել: «Հնչակի գոյութեան առաջին օրից մինչև այժմ մեր սկզբունքները միշտ եղել են սօցիալ-դեմոկրատական», պնդում էր նա վերջերս (Հնչակ, № 11 և 12, 1893): Այս տողերը կարդալիս մեզ մընում է միայն ուսերը վեր քաշել և զարմանալ Հնչակի անչափ միամտութեան վերայ:

Բաւական է, որքան խօսեցինք ուրիշների մասին: Միւս համարում մեք կանցնենք մեր ծրագրին, որ կազմված է 1892 թ. ամառը «Դաշնակցութեան» ընդհանուր ժողովում, որից յետոյ «Դաշնակցութեան» հայեացքները հիմնաւորապէս որոշվեցին և կազմակերպական ձևերն արմատականապէս փոխվեցին: *Իրաւոր.*

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ Կ. ՊՕԼՍԻՑ

Ամսոյս 10-ին երեքշաբթի, Ղալաթիա Խուլիար խանի մէջ սպանութեան փորձ մը կատարվեցաւ Մաքսուտ Սիմօն պէյի վրայ: Սիմօն պէյ իր գրասենեակի դայած տուէն 2 հոգի վրան կը յարձակին, որոնցմէ մէկը ըէվօլվեր կը պարպէ վրան, իսկ միւսը դաշոյնի երկու հարուած կուտայ եւ կը փախչեն: Բէվօլվերի ձայնի վրայ մարդիկ կը համենն եւ յեղափոխականները կը ձերբակալեն: Սիմօն պէյ արիւնաթաթախ գրասենեակ կը փոխադրեն: Օգնութեան հասած բժիշկներէն ոմանք վէրքերը մահայու կը գտնեն, իսկ ոմանք սպրիտու յոյսեր կուտան: Բժիշկները գնտալները չեն կրցած հանել: Երկուրէն լուր տարածուեց թէ մեռաւ, բայց որքան սուղ է Սիմօն պէյի մահը, տակաւին չատուգւեցաւ: Նոյն օրն իսկ քանի մը կասկածելիներու տուէնը խուզարկուեցան եւ քանի մը հոգի ձերբակալուեցան: *Իււր Բոուլ.*

Դաշնակցութեան անձանօթներից խնդրվում է թըղթակցութեան և նուիրատուութեան համար դիմել: L. Boole, 15, Augustus Rd., Hammersmith, W. London.